651
Ц — 45

891.99

Ռ. ՋԱՆԵԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

0.1

II Պրակ

ԲԱԴՈՒ
Տպարան Ն. Ա. Երեւանցեանի
1907

36 FEB 2013

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ZUUՊ-Арм ССР
Ա. Մասիսյանի անվան
им. А. Масисяна

19569-58

Կա՛յ, կայ ցաւ ու վիշտ
Որի անունը
Սարսա՛փ է արտիս
Եւ ա՛յդ եմ երգում...

Հեղ.

...ԿԻՍ

...հուն պատրանքի
... եմ քամում.
...կոխս ցոլքերի
...թերն եմ ծծում։

...իկ, անկոպար որոխս
...երի մեծ ճրան եմ հերկում.
...այրիկ, վատոյժ կազմուածքիս
...ծ կեանքի խմորն եմ հունցում։

...այրիկ, կիզիչ դաշտի մէջ
...ը գլխիս պատոյտ է գործում.
Էնկած եմ մայրիկ, ահեղ մարտի մէջ
Անգէն կռնակիս եղբայրս է խոթում։

Մեռնում եմ մայրիկ, ծաղիկ հասակում
Սիրոյ փշրանքից անվերջ կշտացած
Տակնապը մայրիկ, անպատրաստ կուռում
Կեանքի դաւերից վաղուց եմ հոգնած...

*
* *

Եւ հոգիս ընկաւ լուռ թախծութեան մէջ,
Մենակ ու մոայլ թափառեց դանդիս՝
Խոր ծալքերի տակ։

Եւ պատրանք և յոյս չ՚քացան այնտեղ
Երբ նա խծբծեց թէկուզ ակամայ՝
Մաքիս աղբիւրը։

Այնտեղ ննջում էր հին փոշեթաթախ
Հաւաքունի մէջ,
Իմ առողջ խօսքը.
Ու ես շարժուեցի մաքերի ծովում...

ՄԱՐԴԿԱՆՑ

Ես ասում եմ ձեզ։
Ասում եմ հոգու ամբողջ թելերով
Բոլոր ուժգնութեամբ.
Որ կեանքն ազմկող այս տխուր պահուն
Երբ տարերային հսկայ թափերը
Իրար են բաղխւում,
Դուք ձայն չէք հանում...

Դուք ձայն չհանեցիք երբ մահն էր իշխում,
Եւ ուր զմեղին ճանկերում բռնած՝
Օդում ճախրում էր ասելի ցինը
Փարախն էր նստում օրւայ այդ ժամին
Եւ ուր մի փոքրիկ
արթնութեան համար,
Փորւեցաւ գետնին մի խոր գերեզման
Ես ասում եմ Ձեզ...

Դուք ձայն չ՚հանեցիք
Եւ այն ժամանակ
Երբ կեանքի հպարտ յորձանքը պայթեց
Ու ազգերն առաջ ընդ նա վազեցին
Մի տեղ միայն դեռ՝
Վաւում էր ոխը

Որտեղ և ընկաւ իմ ժողովուրդը
Ես ատում եմ Ձեզ...

Օ՜, խօսքի մարդիք!
Լալկան թռչնի պէս
Ծուարած փոքրիկ ձեր պալատներում,
Մեզ գովք երգեցիք.
Խարխուլ ու ոգեղ մեր խրճիթներում
Ձեր ձայնը եկաւ մեզ սիրաշոյեց,
Մենք քնած ընկանք
Ես Ձեզ ատում եմ...

* * *

Բարձրաթռիչ բազէն ինքնագոհ ժպտով
Ճախրեց ու նստեց
Լերան սրածայր,
Զիւնոտ կատարին.

Ու հէգ ծիծաղը փայլեց քիմքի վրայ,
Երբ որ նկատեց
Իւր ոտների տակ
Հսկա անդունդը.

Եւ բարձունքներին անսովոր՝ հպարտ,
Նա ուռած կրծքով
Այս երգը երգեց
—Այստեղ տիրում է սառնամանիքը...

ՄԱՐԴԸ

Եւ երբ կ'լինի անհատն ուժեղ,
Անհատն ազատ ու անկախ
Մարդը չի լինի մարդու համար
Ինչպէս սողուն մտավախ
Որ վերանան նեղ, շովինիզմ,
Համախմբումն ազգերի
Ու երբ կեանքի ահեղ ծոցում
Մարդը մենակ կը կանգնի
Կամ թէ չ'լինի իրար կապող
Եւ ոչ մի թել աշխարհում
Որ տիրողներն այնպէս խրոխտ
Թոյլերին են դարբրնում
Ու աղբակոյտ սատամոքսը,
Եւ կիրքն ուժեղ կ'հանգչի
Այն ժամանակ հոգիս ձեզ հետ
Ոսկէ դարը կ'աւետի...

*
* *

Անյաղ ու անվերջ բաղխում էր
կուրծքս,
Ու փոթորկալից զոռ
Ովկիանոսում
Հեգնում իմ կեանքը։

Զայրոյթի ահեղ ճնշման
տակ ուժգին՝
Մարում էր հոգիս,
Այնտեղ թաղւում էր
իմ անուշ հևքը
Իմ սիրան էր պայթել։

Ու չոր ծիծաղով
բարբարոս կեանքի՝
Գոյութիւնը հեգնեց,
—Ոչինչ որ ապրի...

*
* *

Գուցէ ատելի մեզ անհաշտ ոխից
Մեծ մարդկութիւնը իրարից զատի,
Ու պայմանների անողոք վճռից
Եւ դասակարգը ազգերի փոխի։

Կամ լուծւած գեհենն բոցոտ լեզուակով
Կեանքի ափերին տիրելով անցնի,
Ու մարդկանց իրար պատւար թողնելով
Մեծ տիեզերքը առնի ու հալչի.

Եւ կամ թախիծը, անլուր տարապանծ,
Մարդկանց ապրելու յոռետես դարձնի
Ու աննպատակ շնչելուց դրդւած
Ամեն ոք իրան գերեզման փորի։

Կամ գուցէ կեանքի անվերջ պայքարում
Մարդիք իրար դէմ ծառացած կանգնեն,
Ու բնաջնջման այդ ախտոտ ծովում
Մեծ եղբայրութեան կօդեքսը կազմեն...

ԵՍ ԿԵԱՆՔՆ ԵՄ ԵՐԳՈՒՄ

Այնտեղ, ուր մարդը ցաւ ու հոգս մէջքին
Հսկա երկրի հետ կուրծքը կրծքի տուած
Անյոյս ու մռայլ քրտնաջան ոգով
Գալիքն է սերմում,
Ես այն եմ երգում։

Եւ այնտեղ եմ ես ուր մարդն ահաւոր,
Քարացած երկրի կուրծքը պատռելով
Դալկացած ու հեղ եղբօր երեսին՝
Սև հող է գցում.
Եւ որովհետև գերմարդն է մեռնում
Այդտեղ էլ եմ ես իմ երգը երգում...

Եւ ուր խոնջացած՝
Մաշող մաքի հետ հանգիստ է առնում,
Գեղջուկը ինքնին պարփակւում իւր մէջ
Ու անվերջ խորհում
Եւ ծով վշտերի, անհաս տենչերի
Ծալքերում թաղւած,
Այդ կեանքն եմ երգում։

Ո՜հ կարիքն է այն, որ նրան այդպէս
Քսու, նենգ ձեռքով ճմռում է ոյժդին,
և երկրին քսում
Ես այդ եմ երգում...

ՄԱՐԳԱԳԵՏՆՈՒՄ

Երկինքն ուժգին ծփանք առաց
Ճուղք ու ծիծեռ ճվվացին,
Արևելքում մի գեղ փայլեց
Ու ծառերը խշշացին։

Անձրևները կաթիլ-կաթիլ
Ցող թափեցին դուրեկան,
Ու մթան մէջ և վարդ ու ծիլ
Շրթիս վրայ հպաեցան։

Տիեզերքն էլ մի շունչ դառած
Ունկնդիր էր այդ ժամին,
Ու յոնքերը խոժոռ կիտած
Հեկեկում էր դառնագին։

*
* *

Կեանքի ցաւերից էլ երգ չեմ հիւսում
Թող ապատ մնայ նա իմ շերեփից,
Կեանքի ժխորին էլ ձեռք չեմ մեկնում
Թող ապատ մնայ նա իմ գդալից։

Լեզուս շերեփ չի թեկուզ ինձ համար
Բայց մարդիկ ափսոս այդպէս հասկացան,
Կեանքի չախչախն եմ լեզուակը յարմար
Թէկուզ գդալ եմ զնդան հասկացան։

Անխոնջ բառբառին ունկն չ՚դրած
Կեանքի բեռի տակ ես ծունկ չոգեցի,
Ճահիճ ամբոխի թարգմանը դարձած
Մի նորոգ կեանքի սղջերթ մաղթեցի։

Կոտրած շերեփ եմ բոզնեց, անփնաս
Կեանքի կաթսային անպէտք եմ յիմի,
Կրակ էլ դառնամ, այրիմ, որ թող տաս
Դարձեալ անզոր եմ, խառնել չեմ իսկի...



*
* *

Վշտի ու ցաւի մշուշը ճակտիս
Կեանքի իղձերին անխօս փարուեցի.
Հանգած արցունքի հեղեղը կրծքիս
Ծով դարդերիս հետ մենակ մնացի։

Ապշած դրութեամբ մեխուած թողեցին
Մոլար ճամբէքում անմէր ու անսէր.
Անսիրտ կսկիծով ընդմիշտ թաղեցին —
Կեանքի գրի մէջ—ես վաղ եմ հանդեր...

ԿԱՐԱՊԻ ԵՐԳՍ

Ինչո՞ւ արիւնս սառեց ինձանում.
Ու թոյլ մարեցին հոգուս կայծերը
Իր երգը լռեց, ու ես քուն մտայ
Ինչո՞ւ չեմ շարժւում։

Թմրութիւնն եկաւ թևերը փռեց
Ու երբ հնչւում էր իմ անուշ ձայնը,
Ոչ-ոք չ՚հարցրեց—թէ ում ես երգում
Ինչո՞ւ չը լռեմ...

Տենչախոհ գլխում մարած յոյսերի—
Անարցունք վշտի թարգման էի ես
Մի՞թաքս չէր յոգնել, հաց էլ ունէի
Ինչո՞ւ լռեցի։

Չ՚հարցրէք երբէք, ու ես էլ հպարտ
Սև մտքերիս հետ մենակ մնացի,
Իմ երգը լռեց
Այդպէս կարծեցիք
Սակայն դուք մարդիք ապրեցիք յաւէտ...

* * *

Արազի ափին եղէգն էր աճել
Ու շուրջը խմբել վարսակ լորենի,
Մաքի ոստայնում ուղեղս էր թառել
Ու կեանքս ձգել բաժին քրմերի։

Արազի ափին մի ձայն զընդաց
Սիրաս աներկբայ արձականք տուեց,
Սարի հովի պէս իմ կեանքը հեաց
Արազը սակայն կամաց ճղոսրեց։

19569-58

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР
Ա. ՄԱՍԻՍԻՑԻ ԱՆՎԱՆ
им. А. Масиса

*
* *

Աստղոտ գիշերին մութիս հետ
ընկած,
Սուզվեցի նրա անդունդների մէջ՝
ու երգ երգեցի։
Եւ ինձ թւաց թէ ամբոխը
յոգնած,
Տիեզերական վեհ լռութեան մէջ
Իմ ձայնս լսեց,
Ու ինձ հասկացաւ...



Փեփրոնե

Կանաչ չիմանում վրան էր թողած
Եւ ծուխն էլ բարակ երկինք բարձրանում,
Որին և հովիւը իւր աչքը յառած
Մանուկ էր դառել ու լաց էր լինում։

Այդ այն գիշերն էր երբ չօլում յոգնած
Առաջին անգամ մտաւ նրանց տուն,
Ուր և եղբօրը իւր գիրկը առած
Աղջիկն էր հանդարտ օջաղը վառում։

Ոսկէ յուշերից մէկէն սթափուած
Ելաւ հովիւը քարափը դիտեց,
Ու անուրջներում իւր միտքը տարուած
Մութ հարթավայրում մի բան նկատեց։

Կարմրաթուշ Փեփրոն վարսերը արձակ
Խորիմաստ նազով աղբիւրն էր իջել,
Կալբէկի գլխից տղէն մեն-մենակ
Անթարթ նայելուց ապուշ էր կտրել։

Ու մէջի միջին գառները թողած
Զուխէն անբաժան իւր կուռը դցեց,
Ոչխարի կաթնով բաղարճը առած
Դէպի ձորամէջ մէկէն շտապեց...

Աղբիւրի կողքին շիկնած յուզմունքից
Ծածկւած թափանցիկ ճերմակ շղարշում,
Թագնւել էր Փեփրոն ոգի աչքերից
Ու ջրի միջին բարակ ծիծաղում

Պառաւեց երկար բայց զուր, ակամայ
Եւ երբ գտնելու ապարդիւն զգաց,
Քաշւեց թփի տակ ու ձեռքը ահա
Սրինգը առաւ անուշ հեկեկաց...

Շարժւեցին աստեղք փերուզ երկնքից
Առուն խայտալով ընթացքը փոխեց,
Փեփրոյի նանն էլ զգոյշ անցեալից
Դուրս եկաւ ցաւոտ եղնիկը կանչեց։

Կերկերաց յանկարծ ձայնները մի պահ
Եւ, երբ պառաւը օբան ներս մտաւ,
Յոգնած քրտնաթոր աղջիկը ահա
Բաղարճը առած իւր հետ ներս բերաւ

Եթիմ չօբանին աշխարհն էր սիրում
Ու անմեղքը նրան իւր յարգը տալի,
Ամա շատ դէպքում իւր տեղը մոռնում
Խնձոր էր դառնում ու թոլ էր գալի։

Լինում էր գիշերը արխաջում յոգնած
Իւր բաժին ալիւրը բաղարճ էր թխում
Ու սև ոչխարի կաթով ողողած
Ղշի թեով էր նրան ուղարկում։

Անքուն գիշերին լուսնեակի լուսով
Փեփրոն դիտում էր այդ սէրը յառած
Ու մտամոլոր վշտի թախիծով
Իւր կեանքը զոհում նորա հաւատար։

—Քու տատը մեռնի էդ ինչ ես բռնած
Ախչի, ձորերից ցիմա են գալիս,
Տեսնում ես հրէն գառները թողած
Սարերն է ընկել ու դէլ է տալիս

. . . . . .

Կանաչ չիմանում վրան էր կանգնած
Եւ աթարն այնտեղ ծխում էր ուժգին
Ուր և ընութեան տեսքից համակուած
Աղբիւր էր իջնում օրւայ դիցուհին...

*
* *

Մի սիրտ խոցել եմ, ու թողել ճանապին
Եւ ուզում եմ լալ չեմ կարողանում.
Հոգիս վկայ էր էն մեռնող կեանքին
Որ առկայծում էր չէր հանգստանում։

Յիշում եմ, ինչպէս զարկեցի նորան
Սրտի թելերը մէկէն կտրուեց,
Ու էն մեղրածոր շուրթերի վերան
Մեռնող ժպիտը յանկարծ փայլփլեց։

Ու թւում է ինձ թէ սէրը հանգած
Ճանապայի եզրում կանգնած է այնպէս,
Գլուխը կրծքին, խղճուկ, լացկամած
Անգուսպ կատարով կանչում է եռքէս.

*
* *

Թող մեռնի յաւէտ
Եւ կեանքը ընդմիշտ
Որի ծալքերում ոճիրներ գործուեց.
Կեանքի քարացում
Այդպէս եմ ուզում
Թող մեռնի մարդը...

ԽԱԲԵԲԱՅ

Գերեզմանս կըլինի ծովի խոր յատակում
Անմոռաց յիշատակ դու կ'մնաս իմ սրտում.
Իմ սրտում, իմ սրտում, որ անվերջ կմխայ
Ով այնտեղ թափանցէ քո անուն կ'կարդայ։

Ոսկեղէն տառերով դրոշմած կ'տեսնի,
Պանծալի մի անուն և քեզնից կ'փախչի.
Այդ անուն կըկնքեմ ճակատիդ թող կարդայ
Ամեն մի ազնիւ մարդ սոսկալով խաբեբայ...

*
* *

Լուսնեակ գիշերին միտքս համակուեց
Տիեզերական մի խորունկ վշտով,
Հպարտ կրծքիցս ամեն ինչ կորզուեց
Մնացի մենակ ես ինձ երգերով։

Ու թախծոտ երգիս մոգեռն ելևէջ
Տարածութեան մէջ հալեցան, հանգան
Ինչպէս մի հիւլէ իմ կեանքի վսեմ
Սիրուհուս ձայնին ունկնդիր եղաւ։

ՖԱՆՏԱԶԻԱ

Օ՜, եթէ թողնեն ինձ ազատ ապրել,
Եւ երկար խօսել.
Կ'թռչեմ խկոյն բնութեան ծոցը
Նրա գաղտնիքը կը լուսաբանեմ
Աշխարհ կը բերեմ
Մարդկանց կ'ցուցնեմ։
Կ'պատռեմ դիմակը, և մեծ եհովան
Ստիպուած կ'լինի իսկական դէմքով
Մարդկանց առաջ գալ,
Հաշիւ, համար տալ.
Հետաքրքիր է բնութեան խաղը,
Թող բարեհաճի, նա ինձ բացատրի
Թէ ինչ է կեանքը
Ի՞նչ է հէնց ինքը իրր ամբողջութիւն
Ի՞նչն է մարդկային կէտ նպատակը...
Կ'հասնի՞ արդեօք նա երբ և իցէ
Իւր իդէալին
Եթէ չ'յաղթի գոյութեան կուռում,
Չ'դաւաճանի իւր սկզբունքին
Եւ եթէ կուի, անվերջ մաքառի
Երկաթէ կեանքում...

***

Գնում եմ ուղիղ դէպի բարձրութիւն
Եւ ձեռքիս գրիչ, և ձեռքիս պողպատ,
Ուր կայ լոյսի շող օդի մաքրութիւն
Եւ կամքով ուժեղ, և հոգիս հպարտ։

Դէպ այդ անսահման եթերն եմ ձգտում
Ուր խոժոռ փայլով ամպերն են կիսուել,
Հսկայ տարերքը այն մեծ բնութեան
Որոնց հոգու մէջ իմ հեռքն եմ տեսել։

*
* *

Քարափի է սիրտս.
Ուր լուռ գիշերին
Ամեն արարած այնտեղ է մանում,
Ապատան խնդրում
Եւ դաւ, դարաբէք, դարդ, ցաւ նպատակ
Հանուր մի աշխարհ,
Անհուն տիեզերք
Այդ ինքն է որ կայ.
Այդ խոռոչն է իմ վսեմ Աստուածը
Նրան եմ փնտռում.
Սակայն նրա էլ մահամերձ կեանքի,
Դագաղն եմ շինում
Հէնց այդ եմ երգում...

ԱՍՏՈՒԱԾԱՄՈՐ ՊԱՏԿԵՐԻ ԱՌԱՋ

Փախչում եմ կեանքից, փախչում եմ հեռու
Յաղթուած եմ կեանքից յաղթուած ահարկու.
Գոյութեան կուռում ես ընդմիշտ ընկայ
Էլ վեր կենալու ինձ հնար չ'կայ...

Մարդկանց սրտերում դու թոյն ես ցանել
Խղճի տեղ մի կատր սև ածուխ դրել
Էլ ինչպէս ապրեմ այդ քաօս կեանքում
Երբ առանց խղճի մարդիք են ապրում։

Սուրբը, դուն էլ ինձնից երեսդ դարձրիր
Կոյր ամբոխի պէս խորհուրդներ ուիր
Թէ կեղծիր, քծնիր, որ կեանքում ապրես
Այդ յուզուած ծովում մինչ նաւրդ փրկես։

Բայց նաւս անտակ ծովի մէջ կորաւ
Անհաւասար կուռում ընկաւ ու մեռաւ
Էլ նաւ չունիմ ես որի մէջ խեղճին-
Թշւառին, որբին, մի տեղ շնորհեմ.
Ամեն բան գնաց, ամեն յոյս մարեց
Բարին շուտ գնաց չարը խափանեց։

ԵՂԲՕՐՍ

Կապկապած, յետադէմ, անթռիչք դու մի կեանք
Դու անմեղ մեղաւոր, զրպարտուած իմ եղբայր.
Թափեցին քո գլխին մեղքերի մի տարափ
Եւ անխօս, և հլու, դու տարար գլխիվայր։

Գարնան նոր տեսակի հովերին անծանօթ
Զխաբուի հնացած թող քո սիրտ իմ անգին.
Պապերի հարազատ զաւակին դու ծանօթ
Խօսքերի տարափից չ'շեղես քո ուղին։

Դարձեալ նոր գարունքին յաջորդում է աշուն
Դարձեալ նոյն չոր քամին, և խորշակ ու տերև
Կեղծութեամբ խմորուած մաքերի այդ պահուն
Հակառակ մի քամի-անապատ ակներև...

*
* *

Ու ցաւոտ շեշտով, նուագի ձայնին՝
Լուռ ունկն դրի.
Կեանքն էր այդ ժամին ոտիս տակ ընկած
Եւ խորհախորհուրդ
Օձի շապկի մէջ,
Եղանակում էր իմ մահու երգը
Ու նա ուռնում էր իմ մեծ անկումը։

ԿԵՏԵՐ

Եւ հանդիսա կ'պատկեմ հողի տակ յաւիտեան,
Որ թողի աշխարհում պանծալի յուշարձան
Այս կէտերը, այս կետէր, ոչ դարեր կը մնան,
Ոչ անմեռ կը մնան
Եւ անվերջ կը խօսան...

ՊԵՏ-ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ZUUՊ-Арм.ССР
Ա. ԱՄ, А. Мас...ян
ՍԱՍՆԻԿՅԱՆԻ ՄԵՂԵՆ